ÉVALUATION DIAGNOSTIQUE
DES ÉLÈVES ALLOPHONES

Compréhension de l'écrit

CYCLE 2

Langue d'origine : arménien

CANOPÉ

ԱԶԳԱՆՈՒՆ:

ԱՆՈՒՆ:

NIVEAU: FIN DE CP

1

Կարդա հետևյալ տեքստը:

Այս առավոտ, Սամիի զարթուցիչը զանգահարեց ժամը յոթին: Դա իր առաջին դպրոցական օրն էր: Իր մայրը հենց նոր մեղմորեն նրան արթնացրեց:

Իր անկողնի կողքին, կա մեկ աթոռ Սամին վեր է կենում և հագնվում Նա հագնում է իր կապույտ վարտիքը և կարմիր սվիտերը: Նա վերցնում է իր նախընտրած կեպին՝ կանաչ գույնի, կարմիր աստղ վերևում:

Պատուհանի կողքին, կա մի մեծ պահարան, իսկ պատին՝ կատուներով մի նկար:

MI MF MS TBM

2

Կրկին կարդա բառը իր նկարով:

	☐ զարթուցիչ ☐	
	☐ անկողին ☐	
	☐ աթոռ ☐	
	☐ կեպի ☐	
	☐ մայրիկ ☐	
	☐ վարտիք ☐	
	☐ տղա ☐	
	☐ աստղ ☐	
	☐ կատու ☐	
	☐ սվիտեր ☐	

MI MF MS TBM

3

Քանիս՞ին է զանգում Սամիի զարթուցիը: Շրջանակի մեջ առ ճիշտ պատասխանը:

- ժամը վեցին
- ժամը յոթին
- ժամը ութին

MI MF MS TBM

4

Նկարում է Սամիի հագուստը և ավելացնում գեղեցիկ գույներ:



MI MF MS TBM

5

Շրջանակի մեջ առ Սամիի սենյակը: Գիծ քաշիր մյուս նկարների վրա:



• նկար 1



• նկար 2



• նկար 3



• նկար 4

MI MF MS TBM

NIVEAU: FIN DE CE1

Կարդա հաջորդ տեքստը:

«Ժամանակն է սիրելիս — ասում է իր մայրը: Ես պատրաստել եմ քեզ համար նախաճաշ և սպասում եմ քեզ խոհանոցում»:

Սամին նայում է իրեն պահարանի հայելում: Նա հարցնում է ինքն իրեն, ինչպես հանգնված կլինեն մյուսները: Երեկ երեկոյան, նա շատ ժամանակ անցկացրեց իր հագուստը պատրաստեու համար: Նա բացում է պահարանը, վերցնում իր սպորտային կոշիկները և կոշիկները ձեռքին՝ դուրս գալիս սենյակից:

Մութ միջանցքում, նա զգում է հաճելի հոտեր: Երբ նա խոհանոց է մտնում, տեսնում է սեղանին հրաշալի կարկանդակներ՝ ալյուրով և դեռևս տաք ձվերով պատրաստված, տաք շոկոլադի մի մեծ սափոր և մի գեղեցիկ աման մրգերով՝ արքայախնձորներ, բանաններ և խնձորներ:

ՊԱՏԱՍԽԱՆԻՐ ՀԱՐՑԵՐԻՆ

6

Ո±վ է ընտրել Սամիի հագուստը: Շրջանակի մեջ առ ճիշտ պատասխանը:

- Սամի
- Սամիի մայրը
- Սամիի փոքրիկ եղբայրը
- Սամիի հայրը

MI MF MS TBM

7

Գիծ քաշիր այն մրգերի վրա, որոնք ափսեում չեն:

- արքայախնձորներ
- ելակներ
- նարինջներ
- բանաններ
- խնձորներ
- տանձեր

MI MF MS TBM

8

Սամիից քիչ ժամանակ պահանջվեց իր հագուստը պատրաստելու համար: Շրջանակի մեջ վերցրու ճիշտ պատասխանը.

• ճիշտ • սխալ

MI MF MS TBM

9

Սամին չի սիրում այն, ինչ մայրը պատրաստել է նախաճաշին: Շրջանակի մեջ վերցրու ճիշտ պատասխանը:

• ճիշտ • սխալ

MI MF MS TBM

10

Համարակալիր նախադասությունները ժամանակագրական կարգով, հնից մինչև նորը:

..... • Սամին դուրս է գալիս իր սենյակից:

..... • Սամին բացում է պահարանը:

..... • Սամին նայում է ինքն իրեն հայելու մեջ:

..... • Սամին պատրաստել է իր հագուստը:

MI MF MS TBM

NIVEAU: FIN DE CE2

Կարդա հետևյալ տեքստը:

«Շտապիր սիրելիս, ժամանակն է, — ասում է մայրիկը: Վստահ ե±ս, որ նախընտրում ես այնտեղ մենակ գնալ: Դու կգտնե±ս ճանապարհը:

— Այո, մի անհանգստացիր: Ինչ ես ուզում, որ պատահի ինձ հետ: Եվ հետո, պետք է, որ ես սովորեմ, քանի-որ այսպես կլինի ամեն օր »:

Մայրիկը ոչինչ չի ասում և ժպտում, չնայած նրան, որ նա անհանգիստ է: Նա համբուրում է իր որդուն և մատներով շոյում տղայի մազերը: Նա չի սիրում, երբ նա այդպես է վարվում, բայց ոչինչ չի կարող անել դրան հակառակ:

Սամին կցանկանար մի քանի կարկանդակ տանել իր պայուսակում, քանի-որ ժամը 10-ի մոտ նա միշտ սոված է: Նա չգիտի, արդյո±ք թույլ են տալիս այն այս նոր դպրոցում, հետևաբար չի վերցնում իր հետ:

Այնուհետ նա հագնում է իր սպորտային կոշիկները և շտապում դեպի շենքի աստիճանները:

« Սամի° — գոչում է մայրը, վազելով բռնում է որդուն, կեպին ձեռքին, վերցր°ու կեպիդ: Դու մոռացել ես կեպիդ»:

Սամին վերցնում է կեպին և ասում:

« Իմ կանաչ կեպի°ն Սա իմ առաջին օրն է այս դպրոցում և քիչ էր մնում գնայի առանց իմ հաջողություն բերող կեպիի»:

ՇՐՋԱՆԱԿԻ ՄԵՋ ԱՌ ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ

11

Սամին չի սիրում, երբ իր մայրը ձեռքով շոյում է իր մազերը:

• ճիշտ • սխալ

MI MF MS TBM

12

Սամին դնում է կարկանդակներ իր պայուսակի մեջ:

• ճիշտ • սխալ

MI MF MS TBM

13

Ո±րտեղ է ապրում Սամին.

• բնակարանում

• Քարավանում

• առանձին տանը

• դղյակում

MI MF MS TBM

14

Ի±նչու է Սամիի մայրը վազում աստիճանով.

• իրեն համբուրելու համար

• իր կեպին փոխանցելու համար

• մազերը շոյելու համար

• քանի-որ նա ուշանում է

MI MF MS TBM

15

Ըստ քեզ, ի±նչու է Սամին մտածում, որ իր կեպին կարևոր է վերցնել.

- չկորելու համար
- քանի-որ այն իրեն վստահություն է ներշնչում
- դպրոց ավելի շուտ գնալու համար
- քանի-որ դա իր վերջին օրն է դպրոցում

MI | MF | MS | TBM

Rappel des codes de correction:
MI = maîtrise insuffisante MF = maîtrise fragile MS = maîtrise satisfaisante TBM = très bonne maîtrise
MI et MF: non acquis MS et TBM: on considère que c'est acquis